

բեցեալ որդւոյ ազնուատոհմ Յովհաննու Մոնֆէրրաթոյ Մարքիզի, որուն պատերազմացը քաջապէս մասնակցած է եւ կը մասնակցի իսկ, եւ միանգամայն ազգական արքունական տոհմին Կիպրոսի՝ այս Ոթոնին հղբայրը բարեյիշատակ Պետրոսի Կիպրոսի թագաւորին մայրն իրեն ամուսին առած ըլլալով. ուստի այս թագաւորազուններէն եւ իւր եղբորմէն իսկ ազգականութեան պատճառաւ օգտակար նպաստներ կըրնայ ինքը ձեռք բերել. յիրաւի ալ այս Ոթոնը չատ խոհեմ՝ մեծափառ եւ միանգամայն առաքինի անձի մը համբաւը կը վայելէ : Եւ թէպէտ ինքը մեծ զօրութիւն մը չունի անձամբ, սակայն իւր խոհականութեամբն եւ հոգատարութեամբ կարող է — միայն թէ այս գործիս հետամուտ ըլլալ կամենայ — օգնութիւններ գտնել ժողովել այլեւայլ ազգերէ : այս մասին վերջերս իրեն թուղթ մ'ալ խաւրել տուինք, եւ յիշեալ Արքեպիսկոպոսն յանձն առաւ իւր մօտն իսկ երթալու եւ իրեն կամքն ու հաւանութիւնն հետազօտելու : ինքը կարող պիտի ըլլայ անոր յօժարութիւնն եւ ուրիշ զանազան հանգամանքները մի առ մի քննելով տեղեկագրել Ձեզի : իսկ Դուք կրնաք խորհիլ սոյն խնդրոյն վրայ, եւ անձամբ կամ 'ի ձեռն միջնորդի մը Ձեր փրկաւէտ խորհուրդը յիշեալ թագուհւոյն քովն եղող աիկնոջ յայտնել :

Տուեալ յԱւինեոն, փետրուարի Կաղանդաց օրն, յԲ. ամի :

Պապին կողմէն առաջարկուած ամուսնութիւնը չկատարուեցաւ թէեւ, բայց յաջորդ տարին Կոստանդին Դ իր պալատականներէն սպանուելով (1373 ապրիլ), « միարան հաճութեամբ » թագապահ կարգուեցաւ Մարիամ, « մինչեւ հասեալ գայցէ Լեւոն ընիկ տէրն իւրեանց », ինչպէս կը վկայէ Դարդել, եր. 68 :

